



«Լոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աղավնի Մարտիրոսյան

Ուսումնական հաստատություն՝ Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1

1. «Կոնֆլիկտ» ընդհանուր հասկացությունը

1.1. Կոնֆլիկտի կառուցվածքը և հիմնական ձևերը

1.2. Կոնֆլիկտի առաջացման պատճառները և փուլերը

1.3. Ընտանեկան կոնֆլիկտներ: Ընտանեկան հարաբերություններով բավարարվածության աստիճանը

1.4. Ընտանիքի զարգացման ճգնաժամային փուլերը

Գլուխ 2

2. Ներընտանեկան հարաբերությունների կոնֆլիկտայնության դերը սովորողի ուսումնառության գործընթացում

2.1. Հետազոտության անցկացման բնութագրումը

Եզրակացություն

Գրականություն

Ներածություն

Աշխատանքի արդիականությունը

Ժամանակակից հայ իրականության մեջ բարքերի ու սովորությունների հետ մեկտեղ փոխվել են նաև ընտանիքի մասին պատկերացումները:

Մինչամուսնական շրջանում միմյանց հետ ապրելու մասին պատկերացումները այլ են լինում: Մակայն ամուսնությունից հետո յուրաքանչյուր ընտանիք անցնում է մի քանի ճգնաժամային փուլերի միջով՝ միմյանց հարմարվելու փուլ, երեխա ունենալու փուլ և այլն:

Իրավիճակը, որում հայտնվել են հայ ընտանիքները, (նախկին բարեկեցությունը, կայունությունը, որոշակիությունը, ապագայի նկատմամբ դրական դիրքորոշումը, փոխարինվեցին անբարեկեցությամբ, անկայունությամբ, անորոշությամբ, ապագայի նկատմամբ բացասական դիրքորոշմամբ, փոխվեցին նաև հոգևոր արժեքներն ու ավանդույթները), ունի քայքայիչ, վնասաբեր ազդեցություն մարդու հոգեկանի վրա:

Խնդիրն արդիական է այնքանով, որ ընտանեկան հարաբերությունների կոնֆլիկտայնությունը այս կամ այն կերպ ներգործում է ընտանիքի զարգացման և կայունացման վրա: Կոնֆլիկտներն առաջանում են ամուսինների պահանջմունքների անբավարարությունից: Երկարատև կոնֆլիկտները թուլացնում են զգացմունքները և հաճախ հանգեցնում են ապահարզանների: Այսօր ապահարզանների թիվը, հատկապես քաղաքներում, գնալով մեծանում է: Ավելանում է կրկնակի, նույնիսկ եռակի ամուսնությունների քանակը:

Ընտանիքի հոգեբանական մթնոլորտը շատ հաճախ որոշվում է զույգերի ամուսնական հարաբերությունների բավարարվածությամբ: Ամուսնությամբ բավարարվածություն ասելով հաճախ հասկացվում է ընտանիքի ադեկվատ տեսակը:

Ընտանեկան հարաբերություններով բավարարվածության կարևոր գործոն է հանդիսանում ամուսինների միջև կոնֆլիկտների լուծումը: Կոնֆլիկտները կազմում են մարդկային հարաբերությունների անբաժանելի մասը, այդ թվում ամուսնական հարաբերությունների:

Կոնֆլիկտի ֆունկցիայի ուղղվածությունը կախված է, թե վարքի ինչպիսի ոճ են ընտրում ամուսինները: Եթե ընտրվում է կառուցողական, ապա կոնֆլիկտը կրում է զարգացող բնույթ, իսկ եթե ապակառուցողական, ապա կոնֆլիկտը կրում է ընտանիքը քայքայելու բնույթ:

Երիտասարդ ընտանիքներում առաջացած կոնֆլիկտները կրում են ոչ միայն միջանձնային, այլ նաև սոցիալական բնույթ:

Հարց

Ի՞նչ դեր ունի ներընտանեկան հարաբերությունների կոնֆլիկտայնությունը սովորողի ուսումնառության գործընթացում:

Ժամանակակից աշխարհում ընտանիքը և նրա սոցիալ-տնտեսական բարեկեցությունը համարվում են ամուր պետության և առողջ հասարակության գրավականներ, և դրանով պայմանավորված՝ այսօր գիտական հանրության շրջանում մեծ արդիականություն են վայելում ծնողների մանկավարժական իրազեկման հետ կապված տարատեսակ հիմնահարցերը:

Ծնողական կրթության գործընթացում առանցքային կարևորություն ունի երեխան, նր անձի զարգացումն ու փոխհարաբերություններն իրեն շրջապատող միջավայրի հետ:

Ըստ Ա.Մակարենկոյի՝ «յուրաքանչյուր ընտանիք հատկանշվում է կյանքի ու կենսապայմանների յուրակերպությամբ և պետք է ինքնուրույնուբար մանկավարժական շատ խնդիրներ լուծի», սակայն մարդը կյանքի բոլոր փուլերում էլ սովորելու և խորհրդատվության կարիք ու պահանջմունք ունի, հատկապես՝ մեկ այլ մարդու դաստիարակության գործընթացում/Մակարենկո/:

Երբեմն, երբ դեռահասը անցումային տարիքում է, նրա և ծնողների միջև հաճախակի բնույթ է կրում կոնֆլիկտը, ելնելով նրանից, որ երիտասարդն անցնում է բարդ շրջան, մի կողմից նրա օրգանիզմում տեղի են ունենում նշանակալի փոփոխություններ, ինչը կապված է հասունության հետ, մյուս կողմից՝ այդ շրջանը նրա համար բարդ է նաև հոգեբանական առումով, քանի որ նա փորձում է ինքնահաստատվել հասարակության մեջ: Այդ գործընթացը բացարձակապես նորմալ երևույթ է, և մեծ մասամբ բարդություններն ավարտվում են նշված տարիքն անցնելուց հետո:

Շատ կարևոր է ընտանիքի հետ ունենալ լավ հարաբերություններ, քանի որ ներդաշնակ հարաբերությունների պայմաններում ընտանիքի աջակցությունն ընդմիջտ է:

Ընտանիքի հետ կապը մեծ դեր է խաղում անձնական բարեկեցության համար: Կարևոր է, որ անհատը լավ հարաբերություններ ունենա ծնողների հետ: Ներդաշնակ ընտանիքում դաստիարակված երեխան հեշտությամբ է կառավարում նաև մյուս հարաբերությունները, ինչպիսիք են՝ ընկերությունը, ռոմանտիկ կապերը, աշխատանքային հարաբերությունները և այլն: Որոշ ընտանիքներում սերն արտահայտում են նաև ֆիզիկապես. համբուրել, փաթաթվել, գլուխը շոյել և այլն: Որոշ ընտանիքներում ֆիզիկական շփումն ավելի հազվադեպ է: Հարկ է նշել, որ հատկապես փոքր տարիքի երեխաներն ունեն ֆիզիկական շփման կարիք, այդ դեպքում նրանք ավելի մեծ երջանկություն և անվտանգություն են զգում:

Հետազոտության օբյեկտը հանդիսանում են երիտասարդ ընտանիքներ, որոնք ունեն դպրոցահասակ երեխաներ:

Հետազոտության առարկան հանդիսանում է կոնֆլիկտային իրավիճակներում սովորողի ուսումնառության դիտարկումը:

Հետազոտության նպատակն է բացահայտել ներընտանեկան հարաբերությունների կոնֆլիկտայնության դերը սովորողի ուսումնառության գործընթացում:

Հետազոտության նպատակից բխում են հետևյալ **խնդիրները՝**

1. Ուսումնասիրել հիմնխնդրին վերաբերող գիտատեսական գրականություն:

2. Կազմակերպել և անցկացնել ներընտանեկան հարաբերությունների կոնֆլիկտայնության դերը սովորողի ուսումնառության գործընթացում պարզաբանող փորձարարական հետազոտություն:

1. «ԿՈՆՖԼԻԿՏ» ընդհանուր հասկացությունը

Կոնֆլիկտ (լատ. conflictus (բախում, ընդհարում) բառից) կողմերի բախում, հակամարտություն, որի ընթացքում կողմերից գոնե մեկը հակառակ կողմի գործողություններն ընկալում է որպես իր սեփական հետաքրքրություններին ուղղված սպառնալիք: Այլ կերպ՝ կոնֆլիկտն իրականացած տարաձայնություն է, այսինքն, փոխազդեցության մեջ ակտիվացած հակադրվող արժեքների, դիրքորոշումների, մոտիվների արտահայտում, ընդ որում, իր հանգուցալուծման համար տարաձայնությունն, անհրաժեշտաբար, պետք է բացահայտվի կողմերի գործողությունների բախման մեջ: Կամ այս ձևով հասարակական կոնֆլիկտի տակ հասկացվում է հասարակական փոխազդեցության ընթացքում առաջացող նշանակալից տարաձայնությունների զարգացման և ավարտի առավել սուր միջոց, որը դրսևորվում է կոնֆլիկտի սուբյեկտների հակազդեցությամբ և ուղեկցվում միմյանց հանդեպ նրանց բացասական հույզերով:

Կոնֆլիկտների հոգեբանական հետազոտությունները նպատակ ունեն պարզաբանելու այն հոգեբանական օրինաչափությունները, որոնք ընկած են կոնֆլիկտների առաջացման և զարգացման հիմքերում: Այստեղ առավելապես կարևորվում են ներանձնային այնպիսի բովանդակություններ, ինչպիսիք են շարժառիթները, դրդապատճառները, հետաքրքրությունները, հուզական հակազդեցությունները, իմացական կոնստրուկտները և այլն:

Հոգեբանության մեջ կոնֆլիկտ ասելով հասկացվում է նպատակների, հետաքրքրությունների, մոտիվների, կարծիքների, գաղափարների, հայեցակարգերի և չափանիշների հաղորդակցման ընթացքում: Կամ երկու կամ ավելի մարդկանց բացասական հոգեկան վիճակով, որը բնութագրվում է հարաբերությունների օտարումով և թշնամանքով, ինչը նրանց հայացքների, հետաքրքրությունների կամ պահանջների անհամատեղելիությունն է:

Կոնֆլիկտը խնդիրների լուծման ընթացքում երկու կամ ավելի մասնակիցների հակասությունների ակտիվացումն է, որն ունի գործնական կամ առանձին նշանակություն կողմերից յուրաքանչյուրի համար:

Կարևոր է ընկալել կոնֆլիկտների առաջացման սուր հակասությունները, որոնք առաջանում են փոխհարաբերությունների ընթացքում և ուղեկցվում են բացասական հույզերով: Կոնֆլիկտները առօրյա կյանքի անբաժանելի մասն են կազմում: Կոնֆլիկտները սոցիալական ոլորտում որպես վեճ բնական են և անխուսափելի: Ըստ Ռ. Շիֆերի ինչքան բազմազան է աշխարհը, այնքան մեծ թվով հակասությունների կարելի է բախվել:

Կոնֆլիկտներն անխուսափելի են անգամ այն ժամանակ, երբ փոխհարաբերությունները գտնվում են խաղաղության և ներդաշնակության մեջ: Որպեսզի այդ փոխհարաբերությունները չընդհատվեն կոնֆլիկտների պատճառով, այլ հակառակը, զարգանան, յուրաքանչյուր խելահաս

մարդ պետք է կարողանա հասկանա այն պահը, երբ առաջանում է կոնֆլիկտը, կարողանա արդյունավետ հարթեցնի վեճերը և տարաձայնությունները: Որպեսզի կոնֆլիկտները լուծվեն , կարևոր է գտնել տարբեր մոտեցումներ, դուրս գալ կոնֆլիկտների լուծման ավանդական եղանակներից, գործել և մտածել նոր ձևով: Կոնֆլիկտները կարելի է օգտագործել որպես կյանքի փորձի աղբյուր՝ ինքնադաստիարակման և ինքնուսուցման:

Հոգեբանները նշում են, որ կոնֆլիկտները կանխում են հասարակության լճացման խնդիրը, բերում են ընդհանուր զարգացման, խթանում խնդիրների լուծման ոլորտը: Բացի դրանից, բարդ կոնֆլիկտները, որոնք լուծվել են խաղաղ ճանապարհով, կարող է կանխել ավելի լուրջ կոնֆլիկտների առաջացումը: Բախումներն, անկասկած, լավ բանի չեն հանգեցնում, խանգարում են ընդհանուր գործին, խոչընդոտում դրա իրականացման փոխհամաձայնեցված ջանքերը, խաթարում են մարդկային փոխհարաբերությունները, առաջացնում լարվածություն և ցնցումներ, որոնք բացասաբար են անդրադառնում մարդու առողջության, հոգեկան աշխարհի վրա: Ուստի շատ մարդիկ հիմնականում խուսափում և վախենում են բախումներից: Գոյություն ունեն կոնֆլիկտի դրսևորման տարբեր ձևեր: Սակայն կոնֆլիկտը չի կարող ունենալ միայն բացասական հետևանքներ:

Կոնֆլիկտի բացասական կողմերը՝

1. Մոցիալական մթնոլորտի վատթարացում, աշխատանքի արտադրողականության անկում, խմբի պառակտում, հեռացում,
2. Կողմերի միջև փոխըմբռնման բացակայություն և իրավիճակի ոչ համարժեք ընկալո
3. Համագործակցության նվազում կոնֆլիկտի ընթացքում,
4. Հակամարտելու ոգին գերազանցում է տարաձայնությունները հաղթահարելու ցանկությանը,
5. Կոնֆլիկտի ընթացքում տեղի են ունենում նյութական, բարոյական, հոգեկան ծախսեր:

Կոնֆլիկտի դրական կողմերը

1. Կոնֆլիկտը թույլ չի տալիս, որ ձևավորված հարաբերությունները լճանան ու քարանան, այն մղում է փոփոխությունների ու զարգացման՝ միաժամանակ ուղի հարթելով նորամուծությունների համար,
2. Կոնֆլիկտի ընթացքում մարդիկ ավելի լավ են ճանաչում միմյանց,

3. Կոնֆլիկտը կարգավորում է սոցիալական խմբի կառուցվածքը, միավորում է համադրի խմբերին, առաջացնում է նոր կազմակերպություններ և խթանում է մարդկանց ակտիվությունը, վերանում է <<հնազանդության սինդրոմը>>:

4. Նպաստում է անհատի զարգացմանը, պատասխանատվության զարգացմանն ու ինքնագնահատմանը,

5. Դուրս է բերում մարդու թաքնված հատկությունները, արժանիքները:

6. Երբեմն կոնֆլիկտը կարող է բարելավել նախկին վատ, լարված հարաբերությունները և դրանց նոր ընթացք տալ:

1.1 Կոնֆլիկտի կառուցվածքը և հիմնական ձևերը

Կոնֆլիկտի կառուցվածքը վերլուծելու նպատակով առանձնացնենք մի քանի կարևոր բաղադրիչներ.

ա. **Հակամարտող կողմերը:** Կոնֆլիկտի մեջ ներքաշվում են առնվազն 2 հակամարտող կողմ՝ առանձին անհատներ կամ ամբողջ խմբեր: Կոնֆլիկտի մեջ, բացի դրանից, կարող են ներքաշվել նաև այլ մասնակիցներ՝ համակիրներ /այս կամ այն կողմի/, հրահրողներ /սադրիչներ/, հաշտեցնողներ, խորհրդատուներ, անմեղ զոհեր և այլն: Կոնֆլիկտի էությունը ըմբռնելու համար կոնֆլիկտարանն առաջին հերթին ուշադրությունը պետք է բևեռի ընդհարվող կողմերի սոցիալական և հոգեբանական բնութագրերին: Սոցիալական բնութագիր ասելով՝ տվյալ դեպքում նկատի ունենք կողմերի պատկանելիությունը հասարակության այս կամ այն շերտին, նրանց մասնագիտությանը: Դրված դիրքը, սոցիալական դերակատարությունը, հեղինակությունը և այլն: Հոգեբանական բնութագիրը մարդուն բնորոշ անհատական հատկանիշներն են:

բ. **Տարաձայնությունների գոտին:** Կոնֆլիկտն առաջանում է այն ժամանակ, երբ կատարաձայնություններ և վեճի առարկա: Միշտ չէ, որ տարաձայնությունների գոտին հեշտ է ընկալվում: Այն հստակ չեն գիտակցում մինչև անգամ հակամարտության մասնակիցները: Սովորաբար նրանց թվում է, որ եթե կողմերից մեկը զիջելու պարտականություն ցուցաբերի, ապա «ողջ աղմուկ աղաղակը հեշտությամբ կհարթվի: Խնդիրն ավելի է բարդանում տարաձայնությունների գոտու փոփոխության հանգամանքով: Կոնֆլիկտի զարգացման զուգահեռ այդ գոտին կարող է ընդլայնվել կամ սեղմվել: Տարաձայնությունների գոտին այդպիսով ընդլայնվում է՝ բորբոքելով վեճի նորանոր օջախներ, իսկ երբ կողմերը համաձայնության են գալիս որևէ հարցի շուրջ, տարաձայնությունների գոտին սեղմվում է: Իսկ երբ պատասխան են ստանում բոլոր վիճահարույց հարցերը, ապա դրանց զուգահեռ չեզոքանում են նաև տարաձայնությունները:

գ. **Ստեղծված իրավիճակի պատկերացումները:** Կոնֆլիկտի կողմից յուրաքանչյուրը յուրովի է պատկերացնում տարաձայնությունների գոտում ստեղծված իրավիճակը և դրան նպաստող հանգամանքները : Կողմերից յուրաքանչյուրը յուրովի է գնահատում կոնֆլիկտի բնույթը, որն էլ կոնֆլիկտի առաջացման պատճառ է դառնում: Կողմերի պատկերացումները չեն համընկնում : կողմերից մեկը ստողծված իրավիճակն ընկալում է իբրև հակառակ կողմից եկող թշնամանքի, ագրեսիայի սխալ, անօրինաչափ մտածողության դրսևորում: Կողմերից յուրաքանչյուրը չգիտի, թե ստեղծված իրավիճակն ինչպես է ներկայանում հակառակորդին, քանի դեռ վերջինս չի արտահայտում իր տեսակետը: Կոնֆլիկտի առաջացման համար, սակայն, կարևոր չէ ոչ կողմերի՝ իրավիճակին տված գնահատականները, ոչ էլ այն, թե կոնֆլիկտի մեջ ներքաշված անձնավորություններն ինչպես են գնահատում միմիջանց մտքերը:

Եթե ստեղծված իրավիճակը գնահատվում է իրական, ապա այն իրական է նաև իր առաջացրած հետևանքներով: Դիտարկելով թեորեմը՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացությանը. Եթե մարդը կոնֆլիկտային վիճակը համարում է իրական, ապա այն իրական է իր հարուցած հետևանքներով: Եթե ինչ-որ մեկը կարծում է, թե ներքաշվել է կոնֆլիկտի մեջ, ապա իսկապես ներքաշվել է: Հակառակորդը, որի հետ այդ մարդը տարաձայնություններ ունի, կարող է նույնիսկ չկասկածել, որ վիճակը կոնֆլիկտային է:

դ. **Մոտիվները:** Յուրաքանչյուր մարդ ձևավորում է տեսակետների, ցանկությունների, գաղափարների իր համակարգը: Այս ամենը հիմք ընդունելով՝ գնահատում է այն ամենը, ինչն կատարվում է իր շուրջը: Սրանց հիման վրա էլ առաջանում է լինել ինչպես գիտակցած, այնպես էլ ենթագիտակցական: Մոտիվներով է որոշվում այն գործընթացը որը հոգեբանները անվանում են նպատակի ձևավորում է նաև անիրագործելի նպատակներ: Նման դեպքերում նրա մեջ առաջանում են ներանձնային կոնֆլիկտներ: Մարդը, որը կանգնած է 2 օբյեկտների մեկն ընտրելու անհարժեշտության առաջ, վճիռը կայացնելուց հետո մյուս՝ չընտրած օբյեկտը ընկալում է իբրև ավելի բաղձալի: Անհատի մեջ կարող են ձևավորվել նաև անհամատեղելի նպատակներ: Նման դեպքում նպատակների ձևավորման ընթացքը ստանում է 2 հակադիր ձև, որոնցից մեկը դրական վերաբերմունք է առաջացնում օբյեկտի նկատմամբ, նրան մերձենալու ձգտում, մյուսը բացասական, նրանից խույս տալու ձգտում:

ե. **Գործողությունները:** Եթե երկու մարդու միջև տարաձայնություններ կան, իրավիճակի մասին նրանք տարբեր պատկերացումներ ունեն, որոնք առաջացել են տարաձայնությունների գոտու առկայության հետևանքով, եթե կան իրար հակասող և միաժամանակ անիրագործելի մոտիվներ, ապա մարդիկ սկսում են այնպիսի գործողություններ, որոնք բախվում են: Գործողությունները խանգարում են մյուսին՝ հասնելու նվիրական նպատակին: Այդ իսկ պատճառով մի կողմի

գործողությունները հակառակորդի կողմից գնահատվում են իբրև թշնամանքի դրսևորում: Կոնֆլիկտային իրավիճակնորում հակամարտող կողմերից մեկի գործողությունները էականորեն ազդում են մյուսի վրա: Կողմերից մեկի վարքագիծը համապատասխան փոփոխություններ է առաջացնում դիմացինի վարքագծում:

Կոնֆլիկտի ավարտը

Սա կոնֆլիկտի բաց շրջանի վերջին փուլն է: Հաճախ կոնֆլիկտի ավարտումը բնութագրվում է նրանով, որ 2 կողմերն էլ գիտակցում են՝ անիմաստ է այն շարունակել:

Իր բնույթով կոնֆլիկտի ավարտումը կարող է լինել.

1. Հակամարտության նպատակների իրականացման տեսանկյունից:

- Հաղթական
- Փոխզիջումային
- Պարտվողական

2. Կոնֆլիկտի հանգուցալուծման ձևի տեսանկյունից՝

- Խաղաղ
- Բռնի

3. Կոնֆլիկտի գործառույթների տեսանկյունից՝

- Կառուցողական
- Ապակառուցողական

4. Հանգուցալուծման արդյունավետության և լիակատարության տեսանկյունից՝

- Լիովին և արմատապես ավարտված
- Հետաձգված մի որոշ ժամանակով կամ անորոշ ժամանակով

Կոնֆլիկտները դասակարգում են 4 հիմնական տեսակների՝ ներանձնային, միջանձնային, անձի և խմբի միջև, միջխմբային:

Հիմնվելով մի շարք տեսությունների վրա՝ ներանձնային կոնֆլիկտը կարելի է բնորոշել որպես սուր բացասական ապրում,որն առաջ է գալիս անձի ներաշխարհի տարրերի հակասության և պայքարի հետևանքով: Ներանձնային կոնֆլիկտն ուղեկցվում է սոցիալական միջավայրի հետ հակադրությամբ և արտահայտվում է որոշման ընդունման ուշացման միջոցով:

Հարկ է նշել, որ ըստ Ֆրոյդի, ներանձնային կոնֆլիկտը կարող է լինել ինչպես գիտակցված, այնպես էլ չգիտակցված: Ըստ Ֆրոյդի՝ անձի գիտակցությունում առկա հակադիր դրդապատճառները գտնվում են ներդաշնակության մեջ, և կոնֆլիկտներն առաջանում են միայն այն դեպքում, երբ արտաքին վերբալ, սիմվոլիկ կամ էմոցիոնալ <<հոգեկան>> մղումները համընկնում են ինչ-որ մի դրդապատճառի բավարարման հետ և չեն համընկնում մի ուրիշի հետ:

Քանի որ ներանձնային կոնֆլիկտներից խուսափելը համարյա հնարավոր չէ, ապա պետք է փորձել ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կկանխեն դրանց նեգատիվ հետևանքները, եթե դրանք արդեն ի հայտ են եկել: Այսօր կոնֆլիկտաբանությունը մշակել է ներանձնային կոնֆլիկտների լուծման ձևերի և միջոցների հսկայական համակարգ: Սրա հետ մեկտեղ հարկ է հաշվի առնել այն փաստը, որ կոնֆլիկտը կանխարգելելն ավելի հեշտ է, քան հետո լուծելը:

Կոնֆլիկտի ամենատարածված ձևը միջանձնայինն է: Այն պայմանավորված է մարդկանց տարբեր հայացքների, խառնվածքների, արժեքների հետևանքով և ավելի շատ հոգեբանական բնույթ ունի: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

Անձի և խմբի միջև կոնֆլիկտն առավել հաճախ առաջանում է այն ժամանակ, երբ անձն ունենում է այնպիսի շահեր և դիրքորոշում, որոնք տարբերվում են խմբի դիրքորոշումից: Կոնֆլիկտի այս ձևը կապված է նաև անձի և խմբի սպասելիքների տարբերության հետ: Այս կոնֆլիկտը կարող է առաջանալ խմբի և ղեկավարի միջև՝ վերջինիս պաշտոնական պարտականություններից ելնելով, այնպիսի գործողությունների կատարման հետևանքով, որոնք անընդունելի կդիտվեն խմբի կողմից:

Միջխմբային կոնֆլիկտը կարող է լինել ոչ ձևական խմբերի միջև, երբ դրանք ունենում են տարբեր առաջնորդներ, ոչ ձևական խմբերի և ղեկավարության միջև, երբ խմբի կողմից ղեկավարության գործողությունները արդարացի են համարվում, կազմակերպության ստորաբաժանումների միջև:

1.2. Կոնֆլիկտի առաջացման պատճառները և փուլերը

Ներանձնային կոնֆլիկտի առաջացման պատճառների վերաբերյալ կան մի շարք մոտեցումներ.

- Ըստ Զ.Ֆրոյդի ներանձնային կոնֆլիկտի ժամանակ տեղի է ունենում ցանկությունների բախում: Անձի մի մասը պաշտպանում է որոշակի ցանկություններ, իսկ մյուս մասը մերժում է դրանք:

- Ըստ Կ. Յունգի, ներանձնային կոնֆլիկտը հետզարգացում է դեպի հոգեկանի ավելի ցածր, անգիտակցական մակարդակ:
- Կ.Հոռնին ներանձնային կոնֆլիկտը դիտում է որպես ցանկությունների բավարարման և պաշտպանվածության ձգտումների բախում:
- Ըստ Ռոջերսի ներանձնային կոնֆլիկտի հիմքում ընկած է հակասությունը, որը առաջանում է գիտակցված, կյանքի ընթացքում ձեռք բերված, բայց ոչ իրական ինքնագնահատականի և անգիտակցական մակարդակի ինքնագնահատականի միջև:
- Ըստ Ա.Մասլոուի ներանձնային կոնֆլիկտի պատճառը մարդու չիրականացած ինքնադրսևորման պահանջմունքն է:
- Ըստ Վ.Ֆրանկլիի, ներանձնային կոնֆլիկտի առաջացման պատճառը կյանքի իմաստի կորուստն է:

Միջանձնային կոնֆլիկտի առաջացման պատճառները.

Համաձայն Ռ.Կրիչևսկու հիմնադրույթի, կարելի է առանձնացնել միջանձնային կոնֆլիկտների պատճառների երեք խմբեր՝

1. Պատճառների խումբ, որոնք առաջացել են գործունեության ընթացքում,
2. Պատճառների խումբ, որը պայմանավորված է մարդկային հարաբերությունների հոգեբանական առանձնահատկություններով,
3. Պատճառների խումբ, որը պայմանավորված է կոլեկտիվի անդամների անհատական առանձնահատկություններով:

Դոնալդ Ռոջայլդը և առաջարկում են կոնֆլիկտի 5 փուլերից բաղկացած մոդելը: Այդ փուլերն են՝ 1. կոնֆլիկտի պոտենցիալ փուլը, 2. կոնֆլիկտի զարգացման փուլ, 3. կոնֆլիկտի էսկալացիայի փուլ և վերջապես հետ-կոնֆլիկտային փուլ, որն ընդգրկում է 4. անվտանգության կառուցակցման և 5. ինստիտուցիոնալ կառուցակցման փուլերը:

1.3. Ընտանեկան կոնֆլիկտներ: Ընտանեկան հարաբերություններով բավարարվածության աստիճանը

Ընտանիքը որպես մարդկանց կայուն սոցիալական հանրություն, ունի տարիների պատմություն: Այն հասարակության տարր է և կատարում է շատ կարևորագույն խնդիր՝ բնակչության թվի աճ, բազմացում: Դրա յուրահատուկությունը կայանում է նրանում, որ մի քանի մարդ սերտ փոխազդեցություն են ունենում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նմանատիպ ինտենսիվ փոխազդեցության համակարգում անհնար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի: Ճգնաժամն արտահայտվում է նրանում,

որ մի կողմից ընտանիքի նոր ձևեր գտնելու ուղիներ են որոնվում, որոնք ավելի լավ կհամապատասխանեն հարաբերությունների ժամանակակից բովանդակությանը:

1. Օրինակ՝ ամերիկացի հետազոտող Բերրը թվարկում և նկարագրում է ընտանեկան փոխազդեցությունների մոտ 10 ձևեր:
2. Ամուսնական հարաբերություններում ելակետային դերը խաղում են ամուսնական կոնֆլիկտները: Դրանք հաճախ առաջանում են ամուսինների պահանջմունքների անբավարարությունից:
3. Ամուսնական զույգերը, հատկապես երիտասարդները, սովորաբար յուրաքնչյուր կոնֆլիկտային իրավիճակ դարձնում են դրամատիկական և գտնում են, որ նման իրավիճակից միակ ելքը ապահարզանն է:
4. Կոնֆլիկտային իրավիճակներում առաջ է գալիս հետաքրքրությունների, ցանկությունների և պահանջների հակասություն:
5. Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 80-85% ընտանիքներում կան կոնֆլիկտներ: Մնացած 15-20%-ի մոտ առկա են <<վեճեր>> տարբեր պատճառներով: Կախված կոնֆլիկտների հաճախականությունից, խորությունից և սրությունից առանձնացնում են ճգնաժամային, կոնֆլիկտային, պրոբլեմատիկ և ներոտիկ ընտանիքներ:
6. Զույգերի կոնֆլիկտային վարքը կարող է հանդես գալ բաց և փակ ձևերով: Փակ կոնֆլիկտի ցուցանիշներն են լռությունը, կտրուկ ժեստերը կամ հայացքը, որը խոսում է անհամաձայնության մասին, ընտանեկան որևէ ոլորտում փոխներգործության բոյկոտ, հարաբերություններում ընդգծվում է սառնություն:
7. Բաց կոնֆլիկտը դրսևորվում է հաճախ բաց խոսակցությունների միջոցով՝ ընդգծված կոնկրետ ձևով, փոխադարձ վիրավորանքներով, որոշ գործողություններով (դրան աղմուկով փակելը, փշրված սպասքը, սեղանին բռնցքով հարվածը, վիրավորանքը ֆիզիկական գործողություններով և այլն):
8. Զույգերի կոնֆլիկտը սովորաբար պայմանավորված է ինչ-որ բարդ խնդրով: Կոնֆլիկտները առաջ են գալիս ընտանիքի զարգացման տարբեր փուլերում: Առավել կարևոր է կոնֆլիկտի պատճառները բացահայտել սկզբնական փուլում:
9. Կոնֆլիկտների ծագումը պայմանավորված է այս կամ այն պահանջի բավարարման մարդկանց ձգտման հետ: Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է

հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

Ընտանեկան կոնֆլիկտների պատճառները կարող են շատ լինել, սակայն ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ ընտանեկան կյանքի նկատմամբ ունեցած տարբեր հայացքները, անիրական սպասելիքները և չբավարարված պահանջները, որոնք կապված են ընտանեկան կյանքի հետ, ամուսնական անհավատարմությունը, կոպտությունը, անհարգալից վերաբերմունքը միմյանց նկատմամբ, զույգերի հարազատների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, զույգերի հետաքրքրությունների տարբերությունը և այլն :

10. Ա. Ի. Կոչետովն առանձնացնում է ընտանեկան կոնֆլիկտների 7 հիմնական պատճառներ.

1. Ամուսնական հարաբերությունների էթիկայի խախտում(դավաճանություն, խանդ);
2. Կենսաբանական անհամատեղելիությունը;
3. Ամուսինների ոչ ճիշտ փոխհարաբերությունները շրջապատող մարդկանց հետ(հարազատներ, ծանոթներ և այլն);
4. Պահանջմունքների և հետաքրքրությունների անհամատեղելիություն;
5. Երեխայի հանդեպ մանկավարժական դիրքի տարբերությունը;
6. Անձնական թերությունների կամ մեկի բացասական որակների առկայությունը/երբեմն միաժամանակ երկուսինը/;
7. Ծնողների և երեխաների միջև փոխհասկացվածության բացակայությունը:

Վ. Ա. Միսենկոն ուսումնասիրել է վերոնշյալ պատճառները, բայց սահմանել է ավելի հստակ:

1. Ամուսիններից մեկի սեռական պահանջների անբավարարվածություն;
2. Արժեքների և սեփական <<Ես>>-ի նշանակության պահանջների անբավարարվածություն;
3. Ամուսիններից մեկի կամ միաժամանակ երկուսի դրական հույզերի պահանջների անբավարարվածություն/քնքշանքի, գուրգուրանքի, հոգատարության, ուշադրության բացակայություն/:

1.4. Ընտանիքի զարգացման ճգնաժամային փուլերը

Առանձնացնում են նաև ժամանակաշրջաններ և գործոններ, որոնք ազդում են ամուսնական հարաբերությունների կոնֆլիկտայնության վրա: Դրանք անվանենք ընտանիքի զարգացման ճգնաժամային շրջաններ կամ փուլեր:

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջին տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:
2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը(հոբբի); կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխաների խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:
3. Երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:
4. Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հազեցվածության փուլ կամ քաղցի շրջան:
5. Իվոլյուցիոն կամ միայնակության զգացման փուլ՝ այս շրջանը համարվում է 18-24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է իվոլյուցիոն շրջանի հետ: Կարող է ձևավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարիությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Գործոնները, որոնք ընտանիքում հանգեցնում են կոնֆլիկտի, թերի կլինեին, եթե հաշվի չառնվեր մակրոգործոնները, այսինքն՝ ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, հատկապես սոցիալական օտարման աճ, սպառողական պաշտամուքի կողմնորոշում, բարոյական արժեքների արժեզրկում, այդ թվում նաև սեռական վարքի դասական ձևերի, ընտանիքի, կնոջ ավանդական դիրքի փոփոխություն հակադիր խնդիրների, կնոջ լիիրավ տնտեսական ինքնուրույնություն և տան տնտեսուհու համախոսանիշը, տնտեսության, ֆինանսների, պետության սոցիալական ոլորտի ճգնաժամային վիճակը:

Կապված կոնֆլիկտների հաճախականությունից, խորությունից և սրությունից, առանձնացնում են՝

- ճգնաժամային,
- կոնֆլիկտային,
- պրոբլեմային,
- ներոտիկ ընտանիքներ:

Ճգնաժամային ընտանիք- հետաքրքրությունների և պահանջմունքների հակադրությունները կրում են սուր բնույթ և ներառում է ընտանիքի կենսագործունեության կարևորագույն ոլորտը, այսինքն՝ կոնֆլիկտի համար ազդակ կարող են դառնալ բոլոր վերոնշյալ պատճառները: Ամուսինները զբաղեցնում են անհանդուրժողական, աններողամիտ և նույնիսկ թշնամական դիրք մեկը մյուսի նկատմամբ, չհամաձայնվելով ոչ մի զիջման: Ճգնաժամային ամուսնական միությունների թվին կարելի է դասել նաև այն ընտանիքները, որոնք քայքայվում են կամ գտնվում են փլուզման եզրին:

Կոնֆլիկտային ընտանիք- ամուսինների միջև առկա են մշտական ոլորտներ, որոնցում իրենց հետաքրքրությունները բխվում են՝ առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ: Սակայն ամուսնությունը կարող է պահպանվել ուրիշ գործոնների շնորհիվ, ինչպես նաև զիջումների և կոնֆլիկտների փոխզիջումային լուծումների շնորհիվ:

Պրոբլեմային ընտանիք- սրան բնորոշ են դժվարությունների տևական գոյությունը, որն ընդունակ է զգալի հարված հասցնել ամուսնության կայունությանը: Օրինակ, բնակարանի բացակայությունը, ամուսիններից մեկի երկարատև հիվանդություն, ընտանիքը պահելու միջոցների բացակայությունը, հանցագործության համար երկարատև ժամանակով դատապարտվելը և մի շարք այլ խնդիրներ: Այսպիսի ընտանիքներում հավանական է փոխհարաբերությունների սրացում, ամուսիններից մեկի կամ երկուսի մոտ էլ հոգեկան խանգարումների դրսևորում:

Ներքոտիկ ընտանիք- այստեղ հիմնական դերը խաղում է այն գործոնների կուտակումը, որոնք հանգեցնում են հոգեբանական դժվարությունների: Ամուսինների մոտ նկատվում է բարձր տազնապայնություն, քնի խանգարում, ցանկացած առիթով հուզական դրսևորումներ, բարձր ագրեսիվություն և այլն: Ամուսինների կոնֆլիկտային վարքը կարող է դրսևորվել գաղտնի, քողարկված և բաց, ակնհայտ ձևերով, ցուցադրական- դեմոնստրատիվ լռելի, կտրուկ շարժումը/ժեստ/, անհամաձայնություն նշանակող հայացքը, հարաբերություններում ընդգծված, շեշտված սառնությունը և բացահայտ խոսակցությունը տարբեր ձևերով և դրսևորումներով:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ կուտակվելով, անբավարարվածությունն արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

2. Ներընտանեկան հարաբերությունների կոնֆլիկտայնության դերը սովորողի ուսումնառության գործընթացում

Ընտանիքում հուզական հարաբերությունների խախտումը բացասական ազդեցություն է ունենում երեխայի անձի ձևավորման վրա:

Ըստ Ա. Մակարենկոյի՝ «յուրաքանչյուր ընտանիք հատկանշվում է կյանքի ու կենսապայմանների յուրակերպությամբ և պետք է ինքնուրույնաբար մանկավարժական շատ խնդիրներ լուծի», սակայն մարդը կյանքի բոլոր փուլերում էլ սովորելու և խորհրդատվության կարիք ու պահանջմունք ունի, հատկապես՝ մեկ այլ մարդու դաստիարակության գործընթացում /Մակարենկո /: Այս առումով կարևորվում է նաև խորհրդատվության դերը երեխայի և ընտանիքի հետ տարվող աշխատանքներում: Հայ իրականության մեջ վերջերս կատարված մի հետազոտություն նշում է, որ աշխատանքը բարդանում է այն ծնողների հետ, որոնք կոնֆլիկտ ունեն երեխաների կամ ուսուցիչների հետ: Ա. Մ Չադոյանն իր «Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձևավորման գործում» հոդվածում նշում է, որ ծնող-երեխա կոնֆլիկտային իրավիճակների դեպքում մանկավարժ-խորհրդատուն պետք է աշխատանք տանի ծնողների հետ, և այդ աշխատանքի գլխավոր նպատակը պետք է լինի ծնողների կողմից երեխայի խնդրի, նրա անհատականության օբյեկտիվ ընկալումը, երեխայի հետ հաղորդակցման ընթացքում իր դաստիարակչական մարտավարության, ինչպես նաև կրթական գործընթացի այլ մասնակիցների հետ համագործակցության որոշումը: Ընտանիքին ցուցաբերվող աջակցության մեջ կարևոր է ծնողների և մանկավարժների գործողությունների համաձայնեցվածությունը: Ցանկալի է, որ դժվար երեխան իր ժամանակի յուրաքանչյուր պահին գտնվի որևէ կողմի պատասխանատվության գոտում: Այս ջանքերը անհրաժեշտ են, քանի որ նույնիսկ մեկ «պրոբլեմային» երեխա կարող է էական ազդեցություն թողնել ընտանիքում կամ դպրոցի այլ երեխաների վրա /Չադոյան /: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր օրերում կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ, այս բնագավառի հիմնախնդիրների շարքում առանձնապես կարևորվում է երեխայի արժեհամակարգի ձևավորումը, որի բականացման գործընթացում հատկանշական է մանկավարժական խորհրդատվության միջոցով երեխայի ուղեկցումը, արարքների ուղղորդումը, կարգապահական շեղումների վերացումը և նրա նոր՝ բարոյահոգեբանական նկարագրի կերտումը: Պ.Ֆ. Կապտերևը լիովին համոզված էր, որ ընտանիքն ազդում է երեխայի վրա իր մթնոլորտով, անդամներով, մշակութային և գիտական զարգացվածությամբ, միասնականությամբ, բարոյական և ինտելեկտուալ համոզմունքներով: Ըստ նրա՝ ինչպես ցանկացած գործընթացում, երեխայի դաստիարակության ժամանակ էլ

հնարավոր են սխալներ և անհաջողություններ, սակայն ծնողների գերխնդիրն է ստեղծել երեխայի համար այնպիսի պայմաններ, որոնք կկանխեն երեխայի՝ ծնողների կողմից չսիրված և անտեսված լինելու զգացումը: Այսինքն՝ երեխան պետք է վստահ լինի, որ իրեն սիրում են /Շուբովիչ /:

Այս ամենի մասին քաջատեղյակ լինելով՝ պետության մանկավարժական կազմը անձի ձևավորման և դաստիարակության գործընթացում պետք է ուրույն տեղ հատկացնի ծնողների մանկավարժական իրազեկության համար, քանի որ հենց ընտանիքում է տեղի ունենում զարգացող անձի հենքային դաստիարակությունը, հոգևոր ներաշխարհի ձևավորումը, աշխատասիրությունը և սերը հայրենիքի նկատմամբ:

Ժամանակակից կրթական և դաստիարակչական մեթոդներից շատերն ուղղված են երեխայի ռացիոնալ մտածողության և IQ-ի մակարդակի բարձրացմանը: Ծնողները երեխաներին սովորեցնում են գրել և կարդալ, տրամաբանորեն մտածել և խորհել, ինչպես նաև հոգ են տանում երեխայի ֆիզիկական առողջության մասին: Այնուամենայնիվ, անձի ձևավորման և երեխայի սոցիալականացման գործընթացում մեծ տեղ է հատկացված հենց հուզական բանականությանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կյանքի հասարակական և անձնական ոլորտներում հաջողության 80 %-ը պայմանավորում է հուզական բանականության զարգացման մակարդակը, իսկ մնացած 20 %-ն ապահովում է բոլորին հայնտի IQ-ն: Հուզական բանականության բարձր մակարդակն օգնում է հարմարվելու կյանքի տարբեր պայմաններին, արագ հաղթահարելու սթրեսային իրավիճակները, հասնելու մասնագիտական բարձունքների և հաղթահարելու դժվարությունները: Երեխայի սոցիալականացումը և նրա մոտիվացիան դպրոցում, մարդկանց հետ շփվելու և արտաքին աշխարհը ուսումնասիրելու ցանկությունը անմիջապես կախված են ընտանիքում տիրող հուզական մթնոլորտից: Հաճախ ծնողները հակված են թերագնահատելու երեխայի ներքին վիճակի վրա իրենց սեփական զգացմունքների ազդեցության աստիճանը: Սակայն երեխան սպունգ է, որն, առանց զանազանելու պետքականն ու անպետքը, ներծծում է այն ամենը, ինչ զգում է: Այն բոլոր զգացմունքները, որոնք ծնողներն ուղղում են դեպի երեխան, ապագայում պայմանավորում են նրա հուզագգայական մակարդակի զարգացման աստիճանը: Դեռ ներարգանդային շրջանում պտուղը կարդում է մոր մտքերը և զգում նրա տրամադրությունն ու հուզական վիճակը: Յուրաքանչյուր հուզական պայթյուն, սթրեսային իրավիճակ կամ բացասական զգացողություն անմիջապես ազդում է երեխայի վրա:

2.1. Հետազոտության անցկացման բնութագրումը

Հետազոտության շրջանակներում առցանց հարցման միջոցով հետազոտություն է անցկացվել 9-10 տարեկան երեխաների ծնողների շրջանում՝ հասկանալու, թե որքանով են ծնողներն իրազեկ

իրենց երեխաների հուզագգայական մակարդակի մասին, ինչպես են հաղթահարում երեխայի հետ ունեցած կոնֆլիկտները և արդյոք մանկավարժորեն իրազեկ են առկա լուծումների և մեթոդների մասին: Հարցված ծնողների միայն 42,9%-ն է օգտվում մանկավարժական գրականությունից, մնացած 52,4%-ը հիմնվում է սեփական կյանքի փորձի և ծանոթների տված խորհուրդների վրա: Դպրոցից տուն վերադառնալիս հարցվածների 76,2%-ի երեխաները պատմում են դպրոցում տեղի ունեցած հետաքրքիր և դրական իրադարձությունների մասին, մինչդեռ 23,8%-ը խոսում է օրվա ստացած գնահատականներից: Դաստիարակության գործընթացում ագրեսիվ տոնի կիրառումը 71%-ի համար կարևոր է, սակայն նրանցից 61,9%-ը փորձում է հնարավորինս խուսափել դրանից՝ կիրառելով երեխայի խրախուսման խոսքային մեթոդը: Հարցաթերթիկում առաջադրված պատժի մեթոդներից ծնողների 47,6%-ն ընտրել է տեղի ունեցածը հավանության չարժանացնելը, 38,1%-ը՝ ժամանցից կամ խոստացած նվերներից զրկելը, իսկ 14,3%-ը՝ խոսքով սպառնալը: Երեխայի նյարդային գերբեռնվածության պատճառների մասին բոլոր ծնողները տեղյակ են, սակայն 81%-ը պատասխանել է, որ կցանկանար ավելին իմանալ: Հետևապես, անհրաժեշտ է պարբերաբար կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկությանն ուղղված սեմինարներ կամ դասախոսություններ, որտեղ ծնողները կստանան գիտելիքներ հույզերի կարևորության, նեյրոհոգեբանության և հուզական բանականության մասին, կխորհրդակցեն մասնագետների հետ, թե ինչպես տանը հսկել երեխայի աշխատանքը և նրան բազմաբնույթ հոգեբանական աջակցություն ցուցաբերել: Չնայած հարցված ծնողների 42,9%-ը գտնում է, որ իրեն նման միջոցառումներ անհրաժեշտ չեն, սակայն մյուս 57,1%-ը խոստովանում է, որ դեմ չէր լինի նման աջակցության:

Եզրակացություն

Այսպիսով, համաձայն հետևյալ հետազոտության, եկանք այն եզրակացության, որ գրեթե բոլոր ամուսնական զույգերն էլ պարբերաբար հայտնվում են կոնֆլիկտային իրավիճակներում: Մակայն, հուրախություն մեզ՝ հարցված ծնողները մեծամասամբ հանդուրժող են, քանի որ նրանցից ոչ ոք ֆիզիկական պատժի կամ ահաբեկման չի ենթարկում իր երեխային, շատերը զրուցում են երեխայի հետ օրվա իրադարձությունների շուրջ և փորձում հասկանալ ինչպիսի հոգեբանական վիճակով է երեխան վերադառնում տուն: Գուցեն դա պայմանավորված է նրանով, որ ծնողների այս սերունդը մեծացել է հետպատերազմյան սուղ կեցության պայմաններում, որտեղ միակ հոգսը օրվա հացի խնդիրը լուծելն է եղել, մինչև երրորդ հազարամյակի հասանելիության պայմաններում կյանքի բոլոր բնագավառները անձնակենտրոն մոտեցում են պահանջում: Ինչևէ, միանշանակ չենք կարող ասել, որ բոլոր ծնողները գիտեն, թե ինչն է կարևոր երեխայի դաստիարակության գործընթացում: Հետևապես, ծնողների հոգեբանամանկավարժական իրազեկման ժամանակ, թերևս, անհրաժեշտ է լավագույնս ընդգծել ծնողների՝ հուզական բանականության դրսևորման այն կարևորագույն տարրերը, որոնք էապես ազդում են երեխայի առողջ հուզական և ֆիզիկական զարգացման վրա: Մակայն հողվածում արձարձված գաղափարներն ամենևին էլ չեն քարոզում ջերմոցային պայմաններում դաստիարակել երեխաներին, այլ, ըստ էության, իրազեկում են ծնողներին օգնել իրենց երեխաներին դառնալու հուզականորեն ավելի կայուն անհատներ՝ նրանց ապահովելով հուզական կայուն մթնոլորտով, դրական արձագանքով և առողջ փոխհարաբերություններով:

Գրականություն

1. psycbology.academic.ru,
2. ru.wikipedia.org,
3. Анцупов А. Я., Шипилов А. И. Конфликтология. Учебник для вузов, 1999г.
Берри Уайнхолд, Джений Уайнхолд Освобождение от созависимости, 2002,
4. Гришина Н.В. Психология конфликта, 2008,
5. Кочетов А. И. Начало семейной жизни/ А. И. Кочетов Мужчина и женщина: отношения полов, 1989,
6. Сысенко В. А. Супружеские конфликты, 1989,
7. Զաղոյան Ա. Մ., Խորհրդատվության դաստիարակչական դերը սովորողների պահվածքի ձեւավորման գործում/ Մանկավարժություն N 1 ՀՅԴ 373 Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014, էջ 187:
8. Մակարենկո Ա.Ս., Գիրք ծնողների համար, Երևան, 1953,
9. Шубович М.М., Семейная педагогика П.Ф. Каптерева и ее потенциал в современных условиях, УДК 37.018.1, 2004,
10. О.В. Сухомлинская. М.: Педагогика 1990.